



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3413

281

2-28

1860

UK

2007

010

182 3189
ՅԵՄԻՐՔԱՆՏԱՆ

Տ Ի Կ Ք Ն

Է. 1.

ԵՐԲ ԳՆՂԱՓԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԻՅԱԿԱՆ ՔԱՐՈՁՉԱՅ

ՎՐԱՅՕՔ



281

2-28

ԻՔԻՆ Ռ. Յ. ՔԻՐՔՅԵԱՆ

Կ.-ՊՕԼԻՍ, ՖԻՆԱՆՏՃԸԼԱՐ

— 1860 —

THE UNIVERSITY OF CHICAGO

1892

18

1892

1892

1892



1892

1892

— 1892 —

THE UNIVERSITY OF CHICAGO



36406-4.4.

ԹՈՒՐՓԱՆՏԱՆ

200
2503-26

Մ. ՏԻԿԻՆ

19660-55

281
2-28



8
→ C F

1004
1956

1. Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցին Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցի է, և անոր մէջ հոգւոյ փրկութիւն կրնայ ըլլալ:
2. Ամբիկացի Երիցական բարոզչաց՝ Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցւոյ դիմ բռնած ընթացքը՝ հակառակ է Սուրբ գրոց, Աստուծոյ կամաք և ճշմարիտ իմաստասիրութեան:

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԱՐՄԻՆԱԿ Հ. ԶԻՋՄԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԵՆԻ 3. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Կ. Պոլիս, Յինգանըլար

— 1860 —

ՅԱՌԱԶԱՐԱՆ

Չի կայ բան մը՝ որ այնչափ նեղութիւն պատճառէ մարդոց, որչափ որ խոր դէմը ունենայ այնպիսի հակառակորդ մը՝ որն որ խոր գիմեցիկին խօսքերը լսելով զանոնք հերքելու կամ անոնց պատասխանելու փոխանակ՝ տմարդարար իր խօսքը կը շարունակէ, կարելի եղածին չափ ջանալով փախչիլ այն կէտէն՝ որուն վրայ հարկ է խօսիլ: Այնպիսի խնաստանները ընդհանրապէս այս ըսածնիս երկու միջոցներով՝ ի գործ կը գնեն, որոնց առաջինն է իր գիմեցիկը արգիլելը ըրած խորհրդածութեան ընթացքէն՝ բոլորովին անսրտաշաճ հարցում մը կամ խօսք մը մէջ նետելով: Երկրորդը՝ խոր ըրած ճշտումաբանութիւնը զարդարել խօսած լեզուին ազդու եւ գեղեցիկ բառերով: Ահա այս երկու միջոցները շատ անգամ կը խառնեն ազէս խաճաճումով:

Յիշատի վերոյիշեալ խնաստանները շատ անգամ խաչաձուակուելու պատիւը կ'ունենան, բայց կրնան ալ իրենց հակառակորդին ակարութիւնը պատճառ կ'ըլլալ փատկընդունելու իրենց կարծեցեալ յաշխտութեան մը կեղծ միջանակը բայց աւագ, որ ասանկ զատկի յայտնութիւնները երկար չեն կրնար տեսիլ: Աշխարհս իր անկիրճեղանք մէջ արդարապէս եւ անաշտ որուն արժանի

որոնք չեն թողուր որ մարդիկ ստույթիւնը կլինն փոխանակ ճշմարտութեան: Գողերը մինչև արշաղաց կը գործեն: Արիին մինչև լեւանց մթին խուռչներուն եւ անտառաց մայաններուն մէջ կը հալածէ զանոնք: Ահա՛, այսպիսի խայտառակութեամբ կը վերջանայ նաեւ կարծեցեալ յաղթութեան մը սեւագոյն դրօշակին գոռոզ ծածանումը: Կործանուելով անկասկած մէկէ մը, զոր տիեզերաց եւ ճշմարտութեան Արարիչը չի դանդաղիր պատրաստելու:

Եթէ Ազգայինք լաւ ուշադրութեամբ եւ նուրբ կերպով քննելու ըլլան Ամերիկացի Երիցական քարոզչաց՝ (անոնց՝ զոր մենք կը տեսնենք) Հայաստանեաց Եկեղեցւոյ գէթ բռնած ընթացքը, անշուշտ պիտի գտնեն զանոնք վերոլիչեալ անձանց նման՝ անձուռի տրամաբան եւ իմաստակ փախտականներ ... քաւ լիցի, անարժան չեն անոնք այս փառաւոր տիտղոսներուն, քանզի հանգուցեալ ուսումնապերճ եւ Ազգասէր Զօրայեան Պ. Նիկողայոսին հետ իրենց ըրած մէկ վիճարանութիւնը կ'ստուգէ այս ըսածնիս: Երբ Զօրայեանը բողոքակալնաց զանազան ճիւղերուն վրայ խոր յօդուածը կը շարունակէր, Ա-Ե-Բ-Ե-Ե-Ե (որն որ Ամերիկացի Երիցական Միսօնար մը ըսել է) ասանց ամչնալու շարունակ կը ջանար անոր ընթացքը արդիւնելու, հարցնելով թէ, "Ամերիկացի Միսիօնարաց քարոզութիւնը ճշմարիտ է, թէ ոչ" : Այս հարցումը որչափ որ անկարեւոր էր նոյն վիճարանութեան մէջ՝ այնչափ ալ ծիծաղական էր: Եւ Աւետարները՝ որչափ որ իրաւունք չունէր այս հարցումը ընելու, նոյնչափ ալ անոր պատասխանը պահանջելու:

իրաւունք չունէր: Վասն զի հարցումը չէ թէ միայն անկարեւոր էր, այլ՝ նաեւ խաբէական: Երկու ստղիկ խելք ունեցող մէկը անգամ կրնար անոր մէջ յայտնապէս նշմարել փարիսեցութիւն եւ պատրանք: Եթէ պատասխանուէր "Ա, յո", մէկէն պիտի գոչէին: "Ուրեմն ինչո՞ւ մեզի չ'էք յարիր" : Իսկ եթէ պատասխանուէր "Ո՛չ", պիտի պատատէին զիրենք պօտալով: "Միթէ մեր քարոզած Աստուածը, Երրորդութիւնը, Քրիստոսով փրկութիւնը, եւպոյն, եւպոյն. սո՞ւտ է," : Ապա ուրեմն՝ իրենց այս ըրածը շօշափելի խնաստակութիւն էր եւ ո՛չ այլ ինչ: Ինչու որ իրենց քարոզութեանցը մէջ ճշմարտութիւն ալ կայ, ստույթիւն ալ կայ: Քարոզած Աստուածնին ճշմարիտ է: Իսկ՝ "Հաստատանեաց Լուսաւորչական Եկեղեցւոյ մէջ փրկութիւն չի կայ", քարոզելը՝ զգալի, մեծ ու ծաղրելի սրտութիւն է: Ասանկ ըլլալէն վերջը՝ հարկ չ'եղած տեղը իրենց այս տեսակ հարցում մը ընելը եթէ վերոյիշեալ խնաստակութիւնը չէ, հապա ի՞նչ է: Իրենց կը թողունք այս հանելուկին լուծումը: միանգամայն իմացըներով իրենց, որ Հայկական սրատեսութիւնը շատ դիւրաւ կրնայ նշմարել Մեծօրոյն Գողերուն անհարգութիւնը, եւ զանոնք խայտառակել:

Ուրեմն թող ներկայ պարագայիս մէջ դարձեալ իմաստակութեան ձեռք չի զարնեն վերոյիշեալ ինքնակող առաքեալները: Բայց ի՞նչ հարկ կայ ի՞նչ յիշելու: որպէս զի Ազգայինք կատարեալ ճանչնան զանոնք, որպէս զի պարզամիտները չի խաբուին, եւ որպէս զի իրենք ալ զղուշանան անգամ մ'ալ իրենց դիտակը:

մեր տեսարանին վրայ գլխորդընելէն Եւ խնդրեմք իրենցմէ այս անգամ, որ չի պիտան, չի կանչուրտեն եւ զմեզ անկարեւոր հարցմանց ու ատմարկութեանց հեղեղներով խեղդամահ ընելու չ'աշխատին, եթէ չեն ուզեր կոչա խնատարկութեան փառաւոր ավարտով աւելի վայելչապէս զարգարուիլ: Եթէ կ'ուզեն, թող մատենաներ տեղացընեն. բայց անմեք օրինաւոր փատարանութեամբ լեցուն ըլլան:

Հո՛ւ մեր ներկայ գրութեանը վրայ անդրադառնարով. կ'իմացընենք որ մեր նպատակն է աւազուցանել թէ:

Ամեր կայե Երեցախո Քաղաքացի Հայաստանէայն Լուստարախո Եկեղեցայ դե՛ թանձ ըմեպք հոխառո՛ւ է Ստը՛ Քրոց, Աստա՛նայ Կանցը եւ մանձաման հըմար իմտարաներո՛վեան:


ԹՈՒՔԱՆՏԱ ՏԻԿԻՆ

ԵՒ

ԻՒՐ ԳԱՂԱՓԱՐԸ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԵՐԻՑԱԿԱՆ ՔԱՐՈՁՁԱՑ

ՎՐԱՅՕՐ



ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Հ Ա Յ Բ Ո Ղ Ո Ք Ա Կ Ա Ն Ի Մ Ը Կ Ո Ղ Մ Ա Ն Է

ԹՈՒՔԱՆՏԱ ՏԻԿՆՈՁ ԳՐՈՒՄԾ

« ՏԻԿԻՆ.

« Իմ անմահ հոգւոյս վրիութեանը համար ձեր բարեարտութեան ըրած ջանքը որչափ որ կ'ստիպէ զիս երախտազէտ ըլլալու առ ձեզ, այսու ամենայնիւ մէկ քանի գլխաւոր պատճառներ կը պարտաւորեն զիս որ ձեր յորդորանացը ահանջ չի կախեմ, եւ կարելի եղածին չափ հեռու մնամ Հոյ—Լուսաւորչական Եկեղեցիէն, որն որ իմ աջացս առջեւ Քրիստոսի Ակեղեցի չ'երենար... հոգւոյ առուտուր է այս, Տիկին. կորուստը անդամներ ի ե

դժնդակադոյն : Ուրեմն ներելի է ինձ անշուշտ
յայտմ մասին ձեր կարծեացք չի համաձայնելս .
մինչև որ համոզէք զիս, թէ Հայ—Ղուսաւորչ
չաղան եկեղեցին Քրիստոսի Ակեղեցի է, և
թէ անոր մէջ ես կրնամ փրկուիլ : Ստատրեցէք
այս խնդիրս, և վտահ եղէք իմ խոստմանս
վրայ» :

Մնամ, Է. այլն.

Մ. Ո. Հ. Ե.

ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՖԱՆՏԱ ՏԻԿՆՈՋ ԿՈՂՄԱՆԷ ԳՐՈՒԱԾ

ԱՌ Մ. Ո. Հ. Ե.

« Պարոն.

“ Որովհետեւ այդչափ կը վտահիք իմ
բարեբարութեանս, ես այ՛ իբր փոխարէն ձեր
առ իս ցուցուցած երախտադիտութեան, կը
փութամ կատարելու ձեր խնդիրը՝ որչափ որ
կարողութիւնս կը ներէ : Ստահ եղիք, որ
չի պիտի լսէք ինէ լոկ բառ մը անգամ, որ
ճշմարտասիրութեան, անաչառութեան և ու
ղիղ դատողութեան օրինաց դէմ ըլլայ . վասն զի
ինձ միշտ փափաքելի է անկեղծ ըլլալ, և եր
բէք չի զօհել իրաւասիրութիւնը որ և է մէկու
մը համար, որն որ ՚ի հանդերձելումն գութ

անգամ չի պիտի ունենայ իմ վրաս, երբ ես ա
նոր համար ճշմարտութենէն շեղած ըլլար՝
մասնուած գտնուիմ Անեղին զարհուրելի վիճ
ժուց դառն ընպանակը խմելու . . . չէ, Պա
րոն, այսպիսի զոհ մը ընելը մեծ յիմարութիւն
է : Արդ՝ այսու պայմանաւ սկըսիմ ըստ կարեաց
խնոց լեցընել ձեր հետաքրքրութիւնը ՚ի մասին
Հայաստանեայց Ղուսաւորչական եկեղեցւոյն,
որն որ ձեր աչաց առջև Քրիստոսի Ակեղեցի
չի համարուիր :

“ Յայտնեմ ուրեմն ձեր սխալումը :

“ Չեր այս գաղափարը ճշմարիտ իմաստա
սիրութեան և արդարասիրութեան դէմ է .
վասն զի մենք ստիպեալ ենք ընդունելու սա
սկզբունքը թէ, մեծ կարծելու զենք բնաւ չի, ինչ որ մեծ
իւրեւնք, սերելի է . ինչ որ կ'արեւնք արելի է, ինչ որ ճշմար
տութեան կը սեպենք, ճշմարտութեան է . ինչ որ մուրաբեան կը
հասութեան, մուրաբեան է . մեկ խօստով ինչ որ մերն է, մեզի
իւ վերաբերի, և մեզի մեայն հաճելի է, աղէկ է . և ինչ
որ մերն զէ, մեզի զի վերաբերի, և մեայն մեզի արհաճելի
է, գեշ է :

“ Ամեն լուսաւորեալ և դատողութեան
տէր միտք կը պարտաւորի ընդունիլ այս անժրխ
տելի սկզբունքը . վասն զի՛ բան մը՝ մերը ըլլա
լուն համար, աղէկ չ'ըլլար . և օտարինը ըլլա
լուն համար ալ, դէշ չ'ըլլար : Արդէկը միշտ ա

դէկ է, որուն քով ալ որ գտնուի խակ դէշը՝ միշտ
 դէշ է, թէև սրտերնուս մէջ բնակի: Պարձ-
 եայ՝ մերը աղէկ ըլլալով օտարինը գէշ չ'ըլլար •
 կրնայ մերն ալ աղէկ ըլլալ, օտարինն ալ • ապա
 ուրեմն՝ անբան է և մարդ չ'է ան՝ որ միայն իւր
 գաղափարը կը պաշտէ, և կ'ուզէ որ ամեն մարդ
 իրեն գաղափարակից ըլլայ, և իւր զգացմունք-
 ները ունենայ, թէև սխալ • • • զգուշիւ և
 միանգամայն ցաւալի է յիշելը որ այս ախար
 պաշարած է գրեթէ ընդհանուր աշխարհս • • •

«Արդ՝ վերոյիշեալ իմաստասիրական սկզբ-
 բունքին նայելով՝ (իբր մարդ) բնաւ իրաւունք
 չ'ունինք՝ լոկ մեր գաղափարը պաշտելով, որ և
 իցէ Քրիստոնեայ Ահեղեցի մը Քրիստոսի Ա-
 հեղիցի չի սեպելու, և անոր էօ՛րն անդամները
 դատապարտութեան արժանի սեպելու • վասն զի
 ամեն ճշմարիտ քրիստոնեայ մի և նոյն իրաւամբ,
 մի և նոյն գաղափարով և մի և նոյն զգացմամբ
 իր Ահեղեցին Քրիստոսի Ահեղեցի կը սեպէ,
 և անոր մէջ իր հոգւոյն փրկութիւն կը յուսայ
 իրաւամբ: Հետևաբար՝ բնաւ իրաւունք չ'ու-
 նիք այդպիսի յամառ կերպով Քրիստոսի Ահե-
 ղեցի չի սեպելու Հայաստանեայց Առաւոր-
 չական զԱհեղեցին, և Անոր մէջ հոգւոյ կու-
 բուտտ նշմարելու • վասն զի՝ այդ ընթացքով
 ճշմարիտ իմաստասիրութեան և արդարասիրու-

Handwritten signature

թեան օրինաց դէմ՝ գործած կ'ըլլաք • ինչպէս
 որ յայտնեցինք •

«Այս անգամ՝ բաւ համարեցէք այսչափս
 և վստահ եղիք, որ հետևեալ նամակաւս պիտի
 յայտնեմ ձեզ, որ ձեր գաղափարը ուղղակի դէմ
 է Աստուծոյ կամայք և Սուրբ Պրոց»:

Մնամ, եւայլն.

ԹՈՒՐՅԱՆՏԱ.

ՆԱՄԱԿ ԵՐՐՈՐԴ

Մ. Ո. Հ. Ե. ԻՆ ԿՈՂՄԱՆԷ

ԹՈՒՐՅԱՆՏԱ ՏԻԿՆՈՋ ԳՐՈՒԱԾ

«Տիկիմ.

«Չեր վերջին նամակը որչափ որ պարզ էր»
 նոյնչափ ալ լի էր ճշմարտութեամբ • որն որ
 ինձի մեծ հաճութիւն մը տալէն ՚ի զատ՝ մրտ-
 քիս մէջ ծնաւ նոր գաղափար մը • զոր կը փու-
 թամ ձեզի յայտնելու ներկայ գրութեամբս •

«Չեր յայտնած իմաստասիրական սկզբուն-
 քին համեմատ՝ Ամերիկայէն հոս եկող և մեզի
 Քրիստոնէութիւն սորվեցընող քարոզիչնե-
 ըր՝ մեծ անիրաւութիւն և ամարդութիւն կ'ը-
 նեն ուրեմն Հայ—Առաւորչական Քրիստո-

նէից կրկին Քրիստոնէութիւն քարոզելով և անոնց դադարաւոր աւրելով: Ընչու որ միշտ առ մեն ջանք ՚ի գործ կը դնեն Հայ լուսաւորչական Եկեղեցին մտորեալ ցուցունելու, և անոր էակն անդամները ՚ի կորուստ մասնուած սեպել տալու:

“ Արդ՝ Տիկին, վստահ եղիք, որեթէ ըստ ձեր խոստման ապացուցանէք ինձ թէ իմ դադարաւոր ընդդէմ է օրինացն Աստուծոյ և Սուրբ գրոց, ալ բնաւ չի պիտի խորհիմ թէ Հայ—Լուսաւորչական Եկեղեցին Քրիստոսի Եկեղեցի չ'է, և թէ անոր անդամները չ'են փրկուիր: Թէև աղէկ դիտեմ, որ այն ժամանակը Ամերիկացի Արքեպիսկոպոս Քարոզչաց ատելի պիտի երևնամ:”

Մնամ, Էռայն.

Մ. Ռ. Հ. Ե.

ՆԱՄԱԿ ԶՈՐՐՈՐԴ

ԹՈՒՐՅԱՆՏԱ ՏԻԿՆՈՋ ԿՈՂՄԱՆԷ ԳՐՈՒՍԾ

ԱՌ Մ. Ռ. Հ. Ե.

« Պարոն.

“ Սրախ ուրախութիւնը չափազանց եղաւ, երբ ուշի ուշով կարդացի ձեր վերջին գրութիւնը, զի անով լիովին համոզուեցայ, որ դուք պատրաստ էք ընդունելու ինչ որ ճշմարտութիւն է: Արանի թէ ամեն մարդ ճշմարտութեան բանար իր սրտին դռները ձեզի պէս”

“ Ար փափաքիք, որ խոստումն կատարեմ, և ապացուցանեմ, որ Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցւոյ վրայ ունեցած դադարանիւ հակառակ է Աստուծոյ կամայր և Սուրբ Գրոց, ուրեմն ես ալ կը փութամ իմ խոստումն կատարելու:”

“ Ասոր համար՝ պէտք է որ հաստատեմ նախ որ Աստուծոյ առջև մէկ են ամեն Քրիստոնեայ Եկեղեցիները (այն Եկեղեցիները՝ որոնք կ'ընդունին Քրիստոնէական սկզբանց բոլոր էական և կարևոր մասերը), որով Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցւոյն Քրիստոսի Եկեղեցին ըլլալը պիտի ստուգուի

անշուշտ, և ձեր ունեցած գաղափարին՝ Աստուծոյ կամայք և Սուրբ Գրոց հակառակ ըլլալը պիտի յայտնուի: Արդ՝ այսու պատճառաւ կը հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը մէկ պարզ խօսքի մը վրայ. զորն որ չէ թէ մարդ՝ այլ Աւրիւրն ճշմարտութեան Բրիտանո Տէրն մեր խօսեցաւ, երբոր իրեն համար կ'ըսէին թէ, ստատանայով կը հանէ ստատանները: «Թաղաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի: Մարտի. 1. 25:

«Ստատանն՝ երբ այս խօսքը ըսեց, միւթարուեցաւ անշուշտ, և խորհեցաւ որ, եթէ Բրիտանոսի անուանը և թաղաւորութեանը դէմ իրեն ՚ի գործ դնելիք բոլոր աշխատութիւնները անյաջող ելլեն, գոնէ վերջապէս կրնայ անմիաբանութիւն ձգել Բրիտանոսից մէջ, և ասանկով Բրիտանոսութիւնը կործանել. վասն զի որ և իցէ միութիւն մը՝ բաժանմամբ անպատճառ կը կործանուի ըսել էր Բրիտանոսի խօսքը. արդ՝ ստատանն կրնար վրաստահ ըլլալ Բրիտանոսութեան կործանուելուն, եթէ Բրիտանոսից մէջ բաժանում ձգէր, և իրարու դէմ դարձնէր զանոնք: Յիրաւի՝ ստատանն ամեն կերպով անյաջող դանուելէն վերջը՝ այս միջոցս ձեռք առաւ, և կանուխ՝ Բրիտանոսութեան գարնան մէջ անոր միութիւ-

1004
1945

1966-59
1961

նը քակելու և բաժանումն ձգելու սկսաւ աշխատիլ: Ստատանն բաւական յաջողեցաւ այս անգամ. և հասն այսօր Բրիտանոսութիւնը գրեթէ հարիւր կամ հարիւր քսան ճիւղերու կամ բաժանմանց ենթակայ եղած կը տեսնուի. և դառն է ըսելը որ գրեթէ ամեն մէկ բաժանում գաղանի կամ յայտնի առելութիւն ունի միւսներուն դէմ: Ներելի թո՛ղ ըլլայ ինձ, հեռակցընել թէ, պէտք չ'էր և հաւատալի չ'էր որ ստատանային փախաբը լցուելով՝ աշխատութիւնը արգասաւոր ըլլար և Բրիտանոսութիւնը կործանուէր: Բրիտանոսի վճռոյն նկատմամբ՝ տարակոյս չի կայ ասոր. ուրեմն ինչո՞ւ չի կործանեցաւ. միթէ Բրիտանոս ե՞տ առաւ իր վճիռը. քան լիցի: Հապա՞:—Դեռ մէկ է Բրիտանոսութիւնը և բաժնուած չ'է. Աստուած ՚ի միութիւն կը տեսնէ և մէկ կը ճանչնայ, ամեն Բրիտանոսեական Ակեղեցիները. եթէ ասանկ չ'ըլլար, Բրիտանոսութիւնը ՚ի հարկէ կործանուելու էր. վասն զի՝ «Թաղաւորութիւն բաժանեալ յանձն իւր աւերի»: Մտալուած ենք կամ ամեն Բրիտանոսեական Ակեղեցիները Բրիտանոսի մէկ Ակեղեցի ճանչնալ, կամ Բրիտանոսութիւնը կործանուած չ'է, սակայն՝ Բրիտանոսութիւնը կործանուած չ'է, ուրեմն մէկ է Բրիտանոսի Ակեղեցին. հեռակցընելու ժամանակ 1922



բար՝ Աստուծոյ կամայը և Սուրբ զրոց հակա-
ռահած կ'ըլլանք, երբ Լուսաւորչական Եկե-
ղեցին՝ Քրիստոսի Եկեղեցի չի սեպելու ըւ-
լանք, և Անոր մէջ մեր հողւոյն փրկուելը չի
յուսանք:

« Հաւաստի եմ որ այս նամակս ալ առջին-
ներուն ընդունելութեանը պիտի արժանանայ,
և զիս բոլորովին վտահայցընէ ձեր արդարադա-
տութեանը վայո»:

Մնամ, Եւայլն.

ԹՈՒՐՅԱՆՏԱ

ՆԱՄԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մ Ո՝ Հ՝ Ե՝ ԻՆ ԿՈՂՄԱՆԷ

ԹՈՒՐՅԱՆՏԱ ՏԻԿՆՈՋ ԳՐՈՒՍԾ

« Տիկից

«Ներեցէ՛ք այս անգամ ձեր նամակին պա-
տասխանը ուշացընելուս որուն մի միայն պատ-
ճառ՝ մտացս մէջ զանազան խորհուրդներու ծը-
նանին էր. այնպիսի խորհուրդներ՝ որոնք չէ
թէ միայն համոզեցին զիս, թէ Հայաստան-
եայց Լուսաւորչական Եկեղեցին Քրիստոսի
Եկեղեցի է, այլ նաև պարտաւորեցին զիս

հաւտայու թէ, զայն Եկեղեցին՝ Քրիստոսի Ե-
կեղեցի չի ճանչցողները և անոր Էկան անգամ-
ները իրմէ բաժնողները ոչ այլ ինչ են, բայց
միայն սատանայի արբանեակներ՝ Արդ՝ քանի որ
բոլոր Քրիստոնէական Եկեղեցի մէկ է ըստ
Սուրբ Գրոց, քանի որ սատանային փափաքն
է Անոր միութիւնը քակել, և քանի որ Ամե-
րիկացի Երիցական քարոզիչները Հայ—Լու-
սաւորչական Եկեղեցին իբրև Քրիստոսի Ե-
կեղեցի չ'են ընդունիր, և Քրիստոսի ընդհան-
րական Եկեղեցւոյն միութիւնը քակելու կ'աշ-
խատին, ապա ուրեմն՝ սատանայի կամակից և
Քրիստոնէութիւնը կործանելու փափաքողներ
են: Գարձեալ՝ անոնք որ ինձի պէս կը զատուին
իրենց սեպհական Եկեղեցիէն թէ՛ կամայ, թէ՛
ակամայ, թէ՛ գիտութեամբ և թէ՛ անգիտու-
թեամբ՝ սատանային և իր արբանեակներուն
աշխատութիւնը յառաջ տանողներ են: Հե-
տևաբար խիստ վտանգաւոր է իմ վիճակս,
նոյնպէս և ամեն անոնց՝ որոնք Աստուծոյ կա-
մայցը և Սուրբ Գրոց հակառակ ընթացքով
բաժնուած են Հայաստանեայց լուսաւորչական
Եկեղեցիէն:

«Վաղաչեմ, Տիկին, որ այս ահադին մտա-
տանջութենէս զիս ազատելու համար՝ միջոց
մը ցուցունէք ինձի: Աստահ եղիք, որ իմ առ-

ձեզ ունեցած երախտագիտութիւնս անսպառ պիտի ըլլայ»:

Մնամ, Էնայն.

Մ. Ռ. Հ. Ե.

ՆԱՄԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

ՌՈՒՐՅԱՆՏԱ ՏԻԿՆՈՋ ԿՈՂՄԱՆԵ ԳՐՈՒՄՈ

ԱՌ Մ. Ռ. Հ. Ե.

« Պնրոն.

« Իմ առջի ըրած խորհրդածութիւններէս ձեր հանած հետեւութիւնը այնչափ ճշշմարիտ է որչափ որ ճշմարիտ է մի Աստուծոյ գոյութիւնը: Յիրաւի վրանդաւոր է ձեր վիճակը քանի որ բաժնուած էք Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցիէն. աճապարեցէք ուրեմն՝ և ժամ մը յառաջ Անոր գերիւր վերագարձէք: Յանցանքնիդ մեծ է, իսկ դանդաղեանիդ կրնայ մահացու ըլլալ »:

Մնամ, Էնայն.

ՌՈՒՐՅԱՆՏԱ

ՎԵՐՉԱՐԱՆ

Իրաւախոհ և արդարադատ մտքերու կը յանձնենք ընդհանուր Քրիստոնէութեան վրայ ունեցած դաղափարնիս . և կը խնդրենք, որ իւրաքանչիւր ոք անաչառապէս կարդայ այս տետրակս և տեսնէ թէ, Ամերիկացի Երեցական քարոզաց՝ Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցւոյ դէմ՝ բռնած ընթացքը բոլորովն հակառակ չէ՞ Սուրբ Գրոց և միանգամայն իրաւասիրութեան:

Արժան կը համարինք ծանուցանել հոս սիրելի Ազգայնոց, որ երկրորդ աշխատութեամբ մը պիտի յայտնենք թէ, Ամերիկացի Երեցական քարոզիչները Յիսուսի Քրիստոսի անուանը և Անոր Աւետարանին օրինաւոր պաշտօնեայնները չեն:

Ի վերջոյ՝ պարտ անձին կը սեպենք ճշմարտախնդիր անձանց ուշագրութիւնը հրաւիրել Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցւոյ նորընտիր գերադոյնՔահանայապետ Տ.Տ. ՄԱՏԹԷՈՍ Ա. Արքայնադոյն կաթողիկոսին յօրինած ԲԱՐԻ ՄԱՐԿ ԵՒ ԲԱՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ անուն գրքին վրայ. որն որ կրնայ լիուրէ կերպով յայտնել, թէ ո՞ր է ճշմարտութիւնը:



Faint, illegible text at the top of the left page.

Faint, illegible text below the top line on the left page.

Faint, illegible text below the second line on the left page.

Several lines of faint, illegible text in the middle section of the left page.

Another block of faint, illegible text on the left page.

Final block of faint, illegible text at the bottom of the left page.

Faint, illegible text at the very bottom of the left page.


Small mark or character on the binding edge.

Small mark or character on the binding edge.

Small mark or character on the binding edge.

Small mark or character on the binding edge.

504



3413

«Ազգային գրադարան»



NL0030323

3303